

Կ-182<sup>3</sup>-20.12.2012-ԱՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՂԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ղատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատավարձը» բառը փոխարինել «աշխատավարձի չափի եւ զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալը: *Սույն մասով սահմանված՝* ղատախազի պաշտոն զբաղեցրած անձին նշանակված (վերահաշվարկված) կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել նրա աշխատավարձի չափի եւ զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալը» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ղատախազի պաշտոն զբաղեցրած անձի՝ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

### Անփոփաթեթիկ

«Հայաստանի Հանրապետության նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, կառավարության անդամների, Սահմանադրական դատարանի անդամների, վերահսկիչ պալատի նախագահի և դատավորների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ զոհվելու կամ աշխատունակությունը լրիվ կորցնելու դեպքում նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի կապակցությամբ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	<p style="text-align: center;"><b>«Հայաստանի Հանրապետության նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ</b></p>		
<p>ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄՆԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/</p>	<p>Առաջարկում ենք օրենքի նախագծի առաջին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի փետրվարի 19-ի ՀՕ-33 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի</p> <p>1. առաջին պարբերությունում.</p> <p>1) «աշխատավարձի» բառից հետո լրացնել «եւ զրո ամբողջ իննը տասնորդական գործակցի արտադրյալի» բառերով.</p> <p>2) պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.</p> <p>«Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ օրենքով սահմանված աշխատավարձի չափը բարձրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող Նախագահի կենսաթոշակը համամասնորեն վերահաշվարկվում է:</p> <p>2. երկրորդ պարբերությունում.</p> <p>1) «աշխատավարձի» բառից հետո լրացնել «եւ զրո ամբողջ իննը տասնորդական գործակցի արտադրյալի» բառերով.</p> <p>2) պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.</p> <p>«Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ օրենքով սահմանված աշխատավարձի չափը բարձրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող Նախագահի կենսաթոշակը համամասնորեն վերահաշվարկվում է:»:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

	<p>Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տաներոդ օրվանից:</p> <p>Օրենքի գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:»:</p>	Ընդունվել է մասնակի:	Նախագծի օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետներին վերաբերող դրույթները խմբագրվել են (նախագծի 2-րդ հոդվածի՝ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկելուն վերաբերող դրույթները պահպանվել են):
	<p><b>«Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, կառավարության անդամների, Սահմանադրական դատարանի անդամների, վերահսկիչ պալատի նախագահի և դատավորների կողմից իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ զոհվելու կամ աշխատունակությունը լրիվ կորցնելու դեպքում նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ</b></p>		
<p>ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/</p>	<p>Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տաներոդ օրվանից:</p> <p>Օրենքի գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:»:</p>	Ընդունվել է մասնակի:	Նախագծի օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետներին վերաբերող դրույթները խմբագրվել են(նախագծի 2-րդ հոդվածի՝ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկելուն վերաբերող դրույթները պահպանվել են):
	<p><b>«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ</b></p>		
<p>ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/</p>	<p>Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տաներոդ օրվանից:</p> <p>Օրենքի գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:»:</p>	Ընդունվել է մասնակի:	Նախագծի օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետներին վերաբերող դրույթները խմբագրվել են (նախագծի 2-րդ հոդվածի՝ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկելուն վերաբերող դրույթները պահպանվել են):

	<b>«Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ</b>		
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տաներոդ օրվանից: Օրենքի գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:»:	Ընդունվել է մասնակի:	Նախագծի օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետներին վերաբերող դրույթները խմբագրվել են (նախագծի 2-րդ հոդվածի նշանակված կենսաթոշակները վերահաշվարկելուն վերաբերող դրույթները պահպանվել են):
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «Դատախազի» բառը փոխարինել «Սույն մասով սահմանված՝ դատախազի» բառերով (նպատակ ունենալով առավելագույն չափի սահմանափակումը տարածել միայն մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված դատախազի պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակի վրա):	Ընդունվել է:	Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է: